Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2022 թվականի նոյեմբերի 15-ից 16-ը

Ռուսաստանի Դաշնություն գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Աշոտ Մուրադյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, նոյեմբերի 15-ից 16-ը

4. Հրավիրող կողմը՝

Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր քննարկել Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության և Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության միջև երկկողմ համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր, ծանոթացնել Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությանը կից՝ նորանշանակ մաքսային կցորդին Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավար անձնակազմի հետ, կապերի հաստատումը:

6. Քննարկված թեմաները՝

Այցի ընթացքում քննարկվել են մաքսային ոլորտում երկկողմ համագործակցությանը վերաբերող մի շարք հարցեր, մասնավորապես՝ երկու երկրների մաքսային ծառայությունների միջև համագործակցության ներկա վիճակը, հատուկ ուշադրության է արժանացել Վերին Լարսում ստեղծված իրավիճակը.

քննարկվել են ընթացիկ հարցերին օպերատիվ լուծումներ տալու հնարավոր տարբերակները:

Ներկայացվել է նաև մաքսային կցորդի համակարգի կարևորությունը Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության աշխատանքներին, ինչպես նաև տնտեսվարողներին աջակցություն ցուցաբերելու հարցում:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի ընթացքում բարձրացվել և կարևորվել է երկու երկրների մաքսային մարմինների միջև համագործակցությունը խթանելու նպատակով համապատասխան աշխատանքների իրականացման, տեղեկատվության պարբերաբար փոխանակման արդյունավետ մեխանիզմների առկայությունը:

Կայացել են հանդիպումներ Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության ղեկավար Վ. Բուլավինի և Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության պատասխանատու այլ անձանց հետ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել նաև Վերին Լարս անցակետի վերակառուցման և արդիականացման ընթացիկ աշխատանքներին, որի ավարտին տնտեսվարողները հնարավորություն կունենան ստանալ նոր որակի և ժամանակի շնչին համապատասխանող ծառայություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Կայացած այցի ընթացքում կողմերի միջև ձեռք են բերվել պայմանավորվածություններ երկու մաքսային ծառայությունների միջև համապատասխան աշխատանքների իրականացման, դրանց ձևաչափի, տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև առկա հարցերի կարգավորման վերաբերյալ:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Հանդիպումների ժամանակ ձեռք են բերվել պայմանավորվածություններ հետագա համագործակցության զարգացման, տեղեկատվության փոխանակման ակտիվացման վերաբերյալ, ինչը իր հերթին հնարավորություն կտա մաքսային

կցորդին էլ ավելի արդյունավետ իրականացնել իր առջև դրված խնդիրները և գործառույթները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Nov 18 2022 3:36 PM
Ashot Muradyan

18.11.2022թ.